ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 18.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.02.2022թ. թիվ 26/26-1/2605-2022 գրությամբ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/590-2022 գրության հիման վրա, 15.02.2022թ. թիվ 26/26-

1/2605-2022 գրությամբ նախաձեռնել է «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-9/25-7» ծածկագրով պայմանագիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք):

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրացուցային օրից ավելի:

«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին ուղղված 04.02.2022թ. գրությամբ (կցվում է)՝ ՀՀ պաշտպանության նախարարության նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

- Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշել ենք՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-9/25-7» ծածկագրով պայմանագիր, որը 04.02.2022թ. գրությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարության նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա՝

Պայմանագրով նախատեսված ապրանքի փորձանմուշը հանձնվել է ՀՀ ՊՆ-ին, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ ՊՆ-ն ցանկանում է գնել հեղուկ սպիրտ, այլ ոչ թե ալկոգել, ինչը նախատեսված էր Պայմանագրի տեխնիկական-բնութագրով: Այսինքն՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում Ընկերությունը հնարավորություն է ունեցել մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, ավելին, ներկայացրել է նաև փորձանմուշ, սակայան ՀՀՊՆ-ն հայտարարել է, որ ալկոգել չի ընդունելու՝ այն պետք է փոխարինել հեղուկով և ներկայացրել ՀՀ ՊՆ:

Այդ ողջ ժամանակահատվածում Ընկերությունից կախված ամենը արվել է, որպեսզի ապրանքների մատակարարում հնարավորինս կարճ ժամանակահատվածում իրականացվի ՀՀ ՊՆ-ին, սակայն, եթե պատվիրատուն չխախտեր Ընկերության իրավունքները և ընդունել Պայմանագրի տեխնիկական-բնութագրով նախատեսված ապրանքը, ապա Ընկերությունը չէր հայտնվի անորոշության մեջ:

Ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ պարտավորությունը փաստացի Ընկերության կողմից կկատարվեր, եթե Պատվիրատուն չհրաժարվեր ընդունել Ալկոգել /Extra/ ապրանքատեսակը /նախատեսված Պայմանագրի տեխնիկական գնութագրով/: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված հանգեցրել է պայմանագրի լուծարման, ինչը չի փաստում Ընկերության կողմից ստանձնած պարտավորության կատարման նկատմամբ անբարխղճության դրսևում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգիրք 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Այսպիսով ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված, մասնավորապես՝ որևէ կերպ Ընկերության կողմից ներկայացված

մատակարարման ժամկետը օրենքով նախատեստեսված կարգով երկարացնելու վերաբերյալ գրությանը չպատասխանելով, պայմանագրի փաստացի դադարեցված չլինելու պայմաններում ապրանքները Ընկերության ներկայացուցչի կողմից մատակարարելը, սակայն Պատվիրատուի կողմից անհիմն չընդունելով և ապրանքները մատակարարելու մասին տեղեկանալուց անմիջապես հետո պայմանագիրը լուծարելու պատճառով հնարավոր չի եղել ապրանքը մատակարարել: Հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ մատակարարման ժամկետը երկարացնելու գրությանը չպատասխանելը համարել ենք բավարարում, քանի որ մերժման դեպքում այլ միջոցներ կձեռնարկվեր պարտավորությունը կատարելու համար, միաժամանակ ծանոթանալով մերժման հիմքերին՝ միգուցե ձեռնարկվեր դրա բողոքարկման գործընթաց: Նման պայմաններում գտնում ենք, որ Ընկերությունը չի կարող գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվել՝ նկատի ունենալով նաև, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ նշված պատասխանատվությունը չի կարող հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով ամփոփելով վերոգրյալ, պետք է փաստել, որ պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված, մասնավորապես՝ որևէ կերպ իմ կողմից ներկայացված մատակարարման ժամկետը օրենքով նախատեստեսված կարգով երկարացնելու վերաբերյալ գրությանը չպատասխանելով, պայմանագրի փաստացի դադարեցված չլինելու պայամաններում ապրանքները իմ կողմից մատակարարելը, սակայն պատվիրատուի կողմից անհիմն չընդունելով և ապրանքները մատակարարելու մասին տեղեկանալոց անմիջապես հետո պայմանագիրը լուծարելու պատճառով հնարավոր չի եղել ապրանքը մատակարարել: Հարկ եմ համարում կրկին ընդգծել, որ մատակարարման ժամկետը երկարացնելու իմ գրությանը չպատասխանելը համարել եմ բավարարում, քանի որ մերժման դեպքում այլ միջոցներ կձեռնարկեի պարտավորությունս կատարելու համար, միաժամանակ ծանոթանալով մերժման հիմքերին՝ միգուցե ձեռնարկեի դրա բողոքարկման գործընթաց: Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությանը չի կարող գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ընդգրկվել՝ նկատի ունենալով նաև, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ նշված պատասխանատվությունը չի կարող հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/64 ընթացակարգի շրջանակներում 21.02.2022թ. ժամը 09:25-ին և 28.02.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 28.02.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստին, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/590-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2022թ. դրությամբ, միակողմանի ամբողջական լուծել է՝ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-9/25-7 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 04.02.2022թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում: (...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/64 ընթացակարգի շրջանակներում 21.02.2022թ. ժամը 09:25-ին և 28.02.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/25-7» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 1-ի գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկայի				
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	Մատակարարումը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2021թ
12	Ձեռքի ախտահանման հեղուկ	լիտր	1500	1500

3. Պատվիրատուն «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին ուղղված 04.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-9/25-7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 4-րդ եռամսյակում՝ ոչ ուշ քան 30.10.2021թ. մատակարարել 1500 լիտր «Ձեռքի ախտահանման հեղուկ», որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2022թ. միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 04.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2022թ. թիվ 26/26-1/2605-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/590-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/25-7» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ի գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկայի				
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	Մատակարարումը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2021թ
12	Ձեռքի ախտահանման հեղուկ	լիտր	1500	1500

Պատվիրատուն «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին ուղղված 04.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-9/25-7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 4-րդ եռամսյակում՝ ոչ ուշ քան 30.10.2021թ. մատակարարել 1500 լիտր «Ձեռքի ախտահանման հեղուկ», որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2022թ. միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 04.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 13.09.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/25-7» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա՝

Պայմանագրով նախատեսված ապրանքի փորձանմուշը հանձնվել է ՀՀ ՊՆ-ին, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ ՊՆ-ն ցանկանում է գնել հեղուկ սպիրտ, այլ ոչ թե ալկոգել, ինչը նախատեսված էր Պայմանագրի տեխնիկական-բնութագրով: Այսինքն՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում Ընկերությունը հնարավորություն է ունեցել մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը,

ավելին, ներկայացրել է նաև փորձանմուշ, սակայան ՀՀՊՆ-ն հայտարարել է, որ ալկոգել չի ընդունելու՝ այն պետք է փոխարինել հեղուկով և ներկայացրել ՀՀ ՊՆ:

Այդ ողջ ժամանակահատվածում Ընկերությունից կախված ամենը արվել է, որպեսզի ապրանքների մատակարարում հնարավորինս կարճ ժամանակահատվածում իրականացվի ՀՀ ՊՆ-ին, սակայն, եթե պատվիրատուն չխախտեր Ընկերության իրավունքները և ընդունել Պայմանագրի տեխնիկական-բնութագրով նախատեսված ապրանքը, ապա Ընկերությունը չէր հայտնվի անորոշության մեջ:

Ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ պարտավորությունը փաստացի Ընկերության կողմից կկատարվեր, եթե Պատվիրատուն չհրաժարվեր ընդունել Ալկոգել /Extra/ ապրանքատեսակը /նախատեսված Պայմանագրի տեխնիկական գնութագրով/: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված հանգեցրել է պայմանագրի լուծարման, ինչը չի փաստում Ընկերության կողմից ստանձնած պարտավորության կատարման նկատմամբ անբարխղճության դրսևորում»:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ գործում բացի Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումից, առկա չէ ի հիմնավորումն նշված դիրքորոշման, որևէ փաստարկ և ապացույց, հետևաբար՝ նշված դիրքորոշմամբ վկայակոչվածը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից գնահատվում են որպես չհիմնավորված:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.02.2022թ. թիվ 26/26-1/2605-2022 գրությամբ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**